

ՆԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՆԱՅՐԱԽՈՍԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ՆԱՐԵԿՈՒՄ

Անկասկած է¹, որ Ս. Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանի, ինչպես նաև՝ մյուս երկերի մեջ դրսևորվում է հեղինակի հանճարի հանճարեղ ինքնօրինակությունը: Սակայն այդ ինքնօրինակությունն այլամերժորեն բացարձակ չէ: Նարեկացին ինքնապարփակ ճգնակյաց չէ՝ անհաղորդ Եկեղեցու դարավոր ավանդությանը և աստվածաբանական ժառանգությանը: Թերևս հաղորդակցումն է, որ եկեղեցագործում է նրա խորհրդապաշտական հախտուն խոկոմը՝ այն զերծ պահելով երբեմն ինքնանպատակ, վայրիվերո հուզավառությունից (էկզալտացիա): Բնութագրել Նարեկացու հոգևոր սխրանքը՝ նշանակում է բնութագրել նրա հանճարը եկեղեցական իրականության հետ նրա ունեցած կենդանի հարաբերության պայմաններում միայն: Այդ պայմանների հաշվառումը թույլ է տալիս առավել իրատեսորեն գնահատել նրա հանճարը, առավել մասնագիտորեն արժեվորել այն մեծագույն նպաստը, որ նրա ժառանգությունը բերել է քրիստոնեական մտքին առհասարակ և հայ ոգեկանությանը՝ մասնավորաբար:

Նարեկում նկատվում է Եկեղեցու աստվածաբանական վաստակին հարաբերվող երկու կարգի վարդապետական իրողություն. հրամանակարգային (դոգմատիկ) աստվածաբանություն և ավանդության աստվածաբանություն: Ինչպես հայտնի է, հրամանակարգային աստվածաբանությունը կիրարկում է մտակառուցման երկու եղանակ. ապոֆատիկ (բացասական, անճառելի) և կատաֆատիկ (դրական, ճառելի), որոնք ուղեկցում են աստվածանաչողության երկու ճանապարհ: Կատաֆատիկ աստվածաբանությունը փորձում է դրական որակումներով հատկորոշել Աստծուն, բնորոշել Նրա ճառելի հատկությունները, որոնք «ընկալելի և բնութագրելի» են շնորհիվ մարդու կենդանի փորձառությունից ելող, նյութական իրականությանը տրված արժեքների: Այդ արժեքներից են Աստծուն վերապահված Նարեկում առկա «երկայնամիտ եւ բազումողորմ», «բարերար», «ահաւոր», «գթած», «ողորմած», «ամենակալ», «նորոգող» (Բան Բ)², «սուկալի», «հզոր», «սաստիկ», «երանութիւն», «ամենաբաշխ Աջ, արդարակշիռ ձեռն», «ամուն կենդանի, նախախնամող մատն» (Գ), «նաւապետ», «նաւուղիղ» (ԻԳ) և այլն: Բնութագծում-ստորոգելիների այս շար-

¹ Որպես զեկուցում կարդացվել է դեկտեմբերի 27-ին Ս. Էջմիածնում Նարեկի 1000-ամյակին նվիրված գիտաժողովում:

² Օգտագործված է Նարեկի քննական բնագիրը՝ աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի, Ս. Ղազիմյանի, եր., 1985:

քից քննեմք գոյականական մասնավոր բովանդակություն ունեցող «նառապետ, նատուլիդ» բնորոշումները:

Քրիստոնեական խորհրդաբանության համաձայն, Նարեկացին Աղոթամատյանի ՀԵ բանում աշխարհը նմանեցնում է արեկոծ ծովի, իսկ իր անձը, որով ակնարկում է բովանդակ մարդկությունը՝ ալիքներից գերի տարուբերվող մավակի: Սրան հետևում է մավակի մանրամասն նկարագրությունը: Ծով=աշխարհ, Նավ=մարդ=Եկեղեցի, «նավապետ, նավուլիդ=Քրիստոս, Աստված» խորհրդաբանական զուգահեռն իր ակունքներով կապված է վաղքրիստոնեական աստվածաբանական գիտակցությանը: Այսպես, Հիպպոլիտոս Բուտրացու (+236) երկերից մեկում աշխարհը ներկայացվում է փոթորկալից ծովի, Եկեղեցին՝ փրկագործող նավի, իսկ նավավարը՝ Քրիստոսի պատկերով:

«Նավապետ=Քրիստոս» խորհրդաբանությունը լայնորեն կենցաղավարում է կապաղովկյան հայրերի և Ս. Հովհան Ոսկեբերանի մատենագրության մեջ: Ս. Գրիգոր Նյուսացու «Երգ երգոցի մեկնության» և «Յաղագս կուսութեան» ճառի մեջ առկա են հետևյալ արտահայտությունները. «Իբրև քաջ ոք նատուլիդ ուղղելով զման ի վերին դիտարութիւնն», «Ի նատուլիէն Քրիստոսն ղեկաք ողջախոհութեանն ուղղեալ»³: «Նավ=Եկեղեցի=աշխարհ=մարդ» խորհրդաբանությունն առկա է Ս. Բարսեղ Կեսարացու (18, 81, 90, 92, 150), Ս. Գրիգոր Նազիանզացու (5, 40, 44, 47, 132, 148, 151, 156, 169, 235), Ս. Հովհան Ոսկեբերանի (1-3, 5-7, 9, 11, 16, 17) անակներում⁴: Ս. Բարսեղ Կեսարացու և Ս. Հովհան Ոսկեբերանի մամակներում «նավապետ=Քրիստոսը» արժեվորվում է «մեծ», «լավագույն», «արթուն» որակումներով:

«Նավապետ=Քրիստոս» խորհրդաբանությունն իր անդրադարձը գտնում է հայ աստվածաբանական մատենագրության մեջ նմանապես. «Յաճախապատում» ճառերից մեկում կարդում ենք. «Որպէս իմաստուն նառապետ ուղղելով զնա մարմնոյս ի ծովածուի աշխարհական ալեացս»⁵: Այս պատկերն առկա է նաև Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և Ստեփանոս Սյունեցու գործերում⁶: Դրանք արձագանքն են քրիստոնեական մատենագրության մեջ բազմիցս հանդիպող համաբնույթ որակումների, որոնք իմացաբանական մակարդակում դրսևորում են Մարդ-Աստված հարաբերությունը: Հիշյալ բնութագծում-ստորոգելիները դրսևորում են Աստվածության՝ աղամորդուն մատչելի հատկությունները: Այլ է բացասական կամ անճանելի աստվածաբանության պարագան: Այն Աստվածությունը բնորոշում է այնպիսի ժխտական բնութագծումներով, որոնք ցույց են տալիս Աստծո լիակատար անմատչելիությունը:

³ ՆՐՀ, Բ, էջ 409:

⁴ Տե՛ս Թ. Ա. Миллер, *Образы моря в письмах кашпадокийцев и Иоанна Златоуста [Опыт сопоставительного анализа]- Античность и современность*, М., 1972, ст. 360-69. Հմմտ. А. П. Каждан, «Корабль в бурном море»: К вопросу о соотношении образной системы и исторических взглядов двух византийских писателей – «Из истории культуры средних веков и возрождения», М., 1976, ст. 3-6. Ի դեպ, նավի բաղադրամասերի նարեկյան նկարագրությունը համերաշխվում է Ս. Գրիգոր Նազիանզացու և Ս. Հովհան Ոսկեբերանի նկարագրություններին. Миллер, նշվ. աշխ., էջ 367:

⁵ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաորչի Յաճախապատում ճառք եւ աղօթք», Վենետիկ, 1838, էջ 90:

⁶ Տե՛ս Հ. Քյոսեյան, *Խորհրդանշանը Ստեփանոս Սյունեցու եկեղեցաբանական ժառանգության մեջ*, «Էջմիածին», 1998, Ժ-ԺԱ, էջ 96-97:

Ի տարբերություն կատաֆատիկ՝ դրական աստվածաբանության, Արևելաքրիստոնեական Եկեղեցու հայրախոսական ավանդության մեջ (Ս. Գրիգոր Նյուսացի, Ս. Հովհան Ոսկեբերան) սկզբունքորեն գերադասելի համարված ապոֆատիկ աստվածաբանությունը բացառում է Աստծո ճանաչողության նվազագույն հնարավորությունն իսկ ոչ միայն այստեղ, այլև անդենականում: Եթե կատաֆատիկ աստվածաբանության նպատակն է մատնանշել Աստծո հայտնութենական, տնօրինական գործառույթը (թե ինչ է Աստված մարդու համար), ապա ապոֆատիկ աստվածաբանության նպատակը՝ Աստծո էության բնութագրումն է (թե «ինչ է Աստված Ինքն Իր համար և ինչ չէ մեզ համար»): Եվ քանի որ այդ սկզբունքորեն անկարելի է, ուստի հայրախոսական աստվածաբանության մեջ Աստծուն մերձենալու բարձրագույն կերպ է նկատվում նրա անմատչելիության գիտակցումը⁷:

Այդ գիտակցությամբ են շարադրված Նարեկի ֆետևյալ տողերը. «Աստուածութիւն անճառ... գերազանց գոյով սահմանի անպարագիր բացարձակութեամբ... ոչ անուամբ չափեալ եւ ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ մմանեալ եւ ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ արիմակաւ ձեւացեալ եւ ոչ որպիսութեամբ ծանուցեալ, ոչ ի թերութենէ տարածեալ եւ ոչ ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբեք ի գրաւեալ եւ ոչ ի տեղտոջ վայրի երեւեալ» (ԼԴ): Բերված տողերի սպառնչ ամփոփումը պետք է նկատել «Բո՛ւ՝ չափք անչափելիք» (ԺԶ) հակօրինական (անտիճոմփական) հաստատումը: Արդ, այս նպատակով կիրառված ժխտական բնութագրումները բացարձակաբանական կարելի թե անկարելի թափանցումներով «մատնանիշ են» անուամբ Աստծո անճառելի «ինքնիսկությունը»: Այդպիսիք են Նարեկում բազմիցս հանդիպող «անիմանալի», «անըմբռնելի» (Գ, Ղ, ՂԵ), «անախտակիր» (Բ), «անքնին» (Բ), «անքննելի էութիւն» (ԻԸ), «անփոփոխ» (Բ), «անվախճան» (Բ), «սահման կամ շափղ անհետագօտելի» (ԼԱ), «անքանակ» (ՀԵ, ԼԴ) և այլն: Աստվածության վերջին՝ «անքանակ» բնորոշումը, որ հանդիպում է Նարեկացու Եկեղեցու զանճում («անքանակ պատկեր, գթութեանց խնամոց»)՝ և ժամագրքում («Աստուած անեղ, անժամանակ/Հայր անսկիզբ եւ անքանակ»)՝⁸ նմանապես, առկա է Աղոթամատյանի ԼԴ և ՀԵ բաներում:

Աստծո բացարձակ պարզությունը ցույց տվող տվյալ բնութագիրը արձագանքվերապրուկն է Դիդիմոս Կոյրի (313-398 թթ.) և Կյուրել Ալեքսանդրացու (+444 թ.) առավել հաճախությամբ կիրառած «անքանակություն» եզրի, որ Աստվածության ապոֆատիկ բնորոշումներից է¹⁰: Այդ իմաստով այն կիրառված է Կղեմես Ալեքսանդրացու «Ստորմատիս» երկում (Ե 12, 82) «անբաղադիր» ձևով¹¹, որ Հայր Աստծո հատկորոշումն է: «Անքանակ»-ն այս բովանդակությամբ կիրառված է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ում («անքանակ եւ առանց մասանց է»)՝¹² և Ս. Բարսեղ Կեսարացու՝ Սուրբ Հոգուն նվիրված ճառում

⁷ Այդ մասին հանգամանալից տե՛ս В. Лосский, Апофаза и триическое богословие – “Богословские труды”, сб. 14, М., 1975, с. 95-104, Карл Христиан Фельми, Введение в современное Православное Богословие, М., 1999, с. 33-45.

⁸ Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանճեր, աշխատ. Ա. Բյոշկերյանի, Եր., 1981, էջ 163, տող 6:

⁹ Տե՛ս ժամագիրք, Նիւ-Յորք, 1986, էջ 109:

¹⁰ Прот. Г. Флоренский, Восточные опы церквн, М., 2003, с. 264:

¹¹ Եզնիկ Ծ. վրդ. Պետրոսյան, Հայրաբանություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 126:

¹² Եզնկայ Կողբացու Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վեմետիկ, 1826, էջ 226:

(«անզմին և անտարր»)՝¹³: Ի դեպ, Դիդիմոսի և Կյուրեղի հիշյալ ապոֆատիկ արտահայտության իմաստային հակոտնյան է նարեկյան «քանակեցար անքմին» (ԼԴ) արտահայտությունը, որ իր կատաֆատիկ բովանդակությամբ, ի տարբերություն նախորդի, դրսևորում է տնօրինության սկիզբը՝ Բամի մարմնավորումը:

Ծարքի մյուս՝ «անհետազտելի» բնութագրությունը, որ առկա է նաև հեղինակի՝ Ս. Խաչին նվիրված զանձում¹⁴, արձագանքն է Ս. Բարսեղի «Հայեաց ի քեզ» բնաբանով ճանաչողական «Անհետազտելի իմաստություն Արարչին»¹⁵, Գրիգոր Նյուսացու՝ Ս. Գրիգոր Սքանչելագործին նվիրված ներբողի «Անհետազտելի է մարդկայնոց խորհրդոց»¹⁶, Նանա Աստվագործին Ավետարանի մեկնության նախադրության «Առ խուզմունս իմաստիցն խորս, որ անհետազտելիք ասացան ի վեսմամիտ գերահրաշիցն»¹⁷ արտահայտություններին:

Ապոֆատիկ աստվածաբանության հետ առավել ուղղակի հարաբերության մեջ է «անճանելի» բնութագիրը. «անուամբդ անճանելեալ» (ԻԵ), «ո՞վ ոք զանճանելիսն (յիշեաց) եւ ոչ խոտվեցաւ» (ԻԹ), «անճանտութիւն խորհրդոյս» (ԾԳ), «զանճանտութիւն շնորհիւն» (ԻԷ՛) և այլն: Իրողությունս աղոթական վավերացումն է Ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեան» երկի «Անճանտութիւն ի վերայ աստուածայնոցն ճշմարիտ են» կամ «զաստուածայինսն պատուել ճշմարիտ անճանտութեամբ» օրինակարգումներին¹⁸:

Աստվածաբանական ապոֆատիզմի նույնքան ուշագրավ դրսևորումներից են Նարեկու հանդիպող «անանց» և «անհաս» բնութագրումները: «Որ ինձ անանցն է, Քեզ հպատր է» (ԾԷ՛) արտահայտությունն իմաստային համարժեքն է Ս. Հովհան Ոսկեբերանի՝ Արարածոց մեկնության «Անանց ամենեցուն եւ անտեսանելի, բայց ի Քահանայապետէն միայնոյ», Եսայա մեկնության «զանանց եւ զանկոխ անապատ հորդեաց, արար արքունի պողոտայ» բառերի¹⁹: Նարեկու մտածելու հաճախակի հանդիպող «անհաս», «անհասանելի» բնութագիրն առկա է հետևյալ կապակցություններում. «Անհաս իմաստից թեոց» (ԼԴ), «Փառաց անհասից» (ՁԱ), «Ընդ Հար անհասի» (ՁԱ), «Ծառագայթ անհաս» (ՂԵ), «Անպատում, անհաս» (Ղ), «Խորհուրդ անհասանելի» (ՂԵ), «Անուն անհասութեան» (ԻԳ), «Անհասութեամբն վերնականաւ եւ զանունն ունի անքմին» (ՂԵ) և այլն: Սրանք աստվածաբանորեն աղերսված են Ս. Կյուրեղ Երուսաղեմացու «Յառաջ քան զյաւիտեանս մշտնջենատրութեամբ եւ անհասութեամբ ի Հարել ծնեալ»²⁰, Ս. Գրիգոր Աստվածաբանի «անհասու-

¹³ «Գանձասար», Դ, էջ 204:

¹⁴ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, էջ 213, տ. 13:

¹⁵ Տե՛ս ՄՄ ձեռ. 436, թ. 145բ-48բ:

¹⁶ Տե՛ս ՆԲԸ, Ա, էջ 185:

¹⁷ Տե՛ս «Նանայի Ասորոց վարդապետի Մեկնություն Յովհաննու Աւետարանին», աշխատ. Հ. Բ. Չրաքյանի, Վենետիկ, 1920, էջ 3:

¹⁸ Տե՛ս ՆԲԸ, Ա, էջ 198:

¹⁹ ՆԲԸ, Ա, էջ 107:

²⁰ Տե՛ս «Երանելոյն Կիրիղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան», Վիեննա, 1832, էջ 51:

թեամբն սքանչելի երեւի»²¹, «Արդ, անբաւ է Աստուածութիւնն եւ դժուարաւ տեսանելի... կամ բոլորովին անհասանելի»²² արտահայտությունների հետ:

Աստծո անմատչելիությունը մատնանշող մյուս բնութագրությունն «անմատոյց» է, որ Նարեկում կիրարկվում է էպպես կապված Պողոս առաքյալի «բնակեալ ի լոյս անմատոյց» (Ա ՏԻՄ. Զ 15) արտահայտությամբ հատկորոշվող միջնադարի լուսային խորհրդաբանությանը. «անմատոյց լուսովդ պարածածկեալ (ԺԸ), «փառաւորեալ ի լոյս անմատոյց» (ԻԵ), «Աստուած... ի լոյս անմատոյց ալի» (ՂԵ) և այլն: Ազգաթանգեղոսի պատմության, ինչպես նաև Ս. Գրիգորի վարդապետության մեջ այս հատկորոշումն օգտագործվում է աստվածաբանության «բնությունը» ցույց տալու նպատակով. «Անմատոյց եւ անիմաց է լամենայն արարածոց»²³, «անսկզբնական լիութիւն, անմատոյց բնութիւն... իմանայցի»²⁴:

Աստվածության մյուս բնութագիրն «անկշռելի» (ԻԹ) միավորն է, որ համերաշխվում է Ս. Գրիգորի վարդապետության «անկշռելիութիւն» եզրին²⁵: Նույնքան բնութագրական են Աստծո «անվայրափակ» հատկությունը պարզող հետևյալ տողերը. «Անպարագիր, անվայրափակ տեղի ամենեցուն Բոլոր իսկութեամբ հուպ լամենեսիս» (ԻԳ). սրանք վարդապետական արձագանքն են Ս. Կյուրեղ Երուսաղեմացու «Ոչ ընդ վայրաք փակեալ, այլ վայրացն ինքն է Արարիչ», Սևերիանոս Գաբաղացու «Անսկիզբն է Աստուած, անճառ եւ անհասական, որ ոչ տեղեալք սահմանի եւ ոչ վայրաք բովանդակի» և Ս. Հովհան Ոսկեբերանի «Յամենայնի է, եւ անտեղի է» արտահայտությունների²⁶:

Անուրանալի է այն նպատակը, որ կապապաղովկյան հայրերը բերել են Ս. Երրորդության վերաբերյալ վարդապետությանը: Եթե Ս. Երրորդության միության (մեկության) խնդիրն իր լուծումը ստացավ Ս. Աթանասի ջանքերով, ապա Ս. Երրորդության երրորդականության և անձերի հարաբերակցության հարցը՝ կապապաղովկյան հայրերի միջոցով: Թվում է, Նարեկացին քաջատեղյակ է սրան: Կապապաղովկյան հայրերի ապոֆատիզմի հետ է կապված նրա երրորդաբանական հետևյալ խորհրդածությունը. «Բանզի ոչ նախաթուելովն յԵրրորդութեանն ոք մեծ ինչ քան զմիսն, եւ կամ զկնի անուանիլն նուաստագոյն առ նմանն, եւ կամ ի միճն ասելով՝ խառնակութիւն զոլ դիմացն, եւ կամ յերիցն տրոհումն՝ ուրոյնութիւն ել կամացն» (ԼԴ):

Այս միտքը որոշակիորեն հարաբերվում է Բարսեղ Կեսարացու՝ Ս. Հոգուն նվիրված ճառի հետևյալ հատվածների հետ. «...Շշմարտութիւնս մեր ոչ թէ թուով համարոյ է, այլ ստոյգ Աստուածութեամբն վկայեալ է: ...Արդ, Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ մեզ այսպէս տուան, զի մի Հայր միոյ Որդոյ եւ միոյ Հոգոյն ի մի Աստուածութիւն անդր, եւ չիք ի մեծութեան աստ յայն թիւ միոյ եւ երկուց եւ երից, քանզի ոչ եթէ յաւելն մի բնութիւն հնազան-

²¹ Ի Սուրբ Ծնունդն, ՄՄ, ձեռ. 1500, թ. 724բ-27ա:

²² Տե՛ս «Կնիք հաստոյ ընդհանուր Ս. Եկեղեցու...», աշխատ. Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի, Ս. Էջմիածին, 1914, էջ 32:

²³ Տե՛ս Ազգաթանգեղայ Պատմութիւն հայոց, էջ 131:

²⁴ Անդ, էջ 167:

²⁵ Անդ, էջ 383:

²⁶ Տե՛ս Հրահանգ քրիստոնէական հաստոյ ըստ ուղղափառ դասանութեան եկեղեցոյ Հայաստանեայց, աշխատութեամբ Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիռնացոյ, Մոսկուա, 1850, էջ 132-134:

դեսպի առաջնումն երկրորդն եւ երրորդն՝ երկրորդումն, այլ մեք զժառանգակցութիւն անուանցս այսոցիկ ի մի Աստուածութիւն անդր կարգեմք եւ ոչ առնեմք մեք զթիւ նոցա...»²⁷: Ուստի պատշաճ չէ աշխարհի օրենքներով դաստիարակված մարդկային բանականուխանի չափումներով որոշարկել Ս. Երրորդության անձերի հարաբերակցությունը. «Բայց զի՞նչ մերձ են երկրատր իրաց մեծութիւն կամ փոքրկութիւն եւ կամ թիւ համարոյ նոցա անճառն Աստուածութեան»²⁸:

Գրիգոր Աստվածաբանի ճառերից մեկում կարդում ենք. «Չայս տամ ամենայն կենաց հաղորդ եւ վերակացու՝ զմի Աստուածութիւնն եւ զարութիւնն երեսին զոյ միութեամբ եւ զերիսն ի միասին առեալ՝ առանց բաժանելոյ ոչ առաւել բնութեամբք կամ էութեամբք եւ ոչ անեցեալ կամ նուազեալ գերազանցութեամբ եւ կամ նուաստանալով... զի ոչ ինչ ի նոյն բնութեան մեծ կամ փոքր...»²⁹: Մամբրե վերծանողը, համաձայնելով հայրերի դիտումներին, գրում է. «Եւ արդ, ոչ մեծ եւ ոչ փոքր ի Սուրբ Երրորդութեանն երէսի, զի զմեծ եւ զփոքր, զծանր եւ զթեթեւ, զշատ եւ զսակաւ ժամք եւ ժամանակք բովանդակեմ, իսկ ուր ոչ ժամք եւ ոչ ժամանակք, ոչ չափ եւ ոչ կշիռ մերձենայ յանբաւելի բնութիւնն, անդ ոչ նկատի ոչ փոքր եւ ոչ մեծ»³⁰:

Ս. Երրորդության միությունն (մեկ լինելը) ու առանձնավորական երրորդականությունը ցույց տալու համար Նարեկացին գրում է. «Մի՛ յերից անշփոթ կերպից, եւ երիս՝ ի միոյ անհատուածելի իսկութեանց...» (ՀԵ): Վերջին բառերով հեղինակը բացատրում է «իսկութեանց», այն է՝ անձանց անբաժանելի լինելը: «Իսկութիւն» և «անձ» հասկացությունների այսօրինակ նույնացումը, որ առկա է Հաճախապատումի և Ս. Հովհանն Օձնեցու «Ընդդէմ երեսութեանաց» ճառի մեջ «իսկութիւն=գոյացութիւն=անձ» համարժեքով³¹, իր վրա կրում է Դ դարի առաջին կեսի երրորդաբանական ըմբռնումների դրոշմը: Այս տեսակետից բնորոշ է, որ Ս. Աթանասի, ինչպէս անս՝ նիկիական հայրերի համար *υποστασις* (անձ)-ը իմաստով համապատասխանում է *ὄντοια* (էություն) եզրին³²: Նարեկի խնդրո առարկա արտահայտությունը եզրաբանական այդ անորոշության արձագանքն է:

Հայր Աստծուց Որդի Աստծո ծննդյան կերպը ներկայացնելու նպատակով Նարեկացին գրում է՝ «Պատճառ Որդոյ հայրութեամբ, այլ ոչ նախադրութեամբ» (ԻԸ): Սա նշանակում է, թե Որդին Հորից ծնվում է ոչ թե նրա կամքով կամ ցանկությամբ (ինչպէս պնդում

²⁷ «Գ.անձասար», 1993, Դ, էջ 212-213:

²⁸ ԱճԴ, էջ 212:

²⁹ Տե՛ս Կմիք հաւատոյ, էջ 35, 36:

³⁰ Տե՛ս «Կորինի վարդապետի, Մամբրեի վերծանողի, Դասի Ամայրթի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 70:

³¹ Թաճախապատում, էջ 33 («պատճառ նոցունց իսկութեանց ի նոյն բնութեմէ»), տե՛ս Աւետիքեան, նշվ. աշխ., էջ 495, «Ընդդէմ երեսութեանաց», աշխատ. Հ. Մկրտիչ վրդ. Ավգերյանի, Վենետիկ, 1807, էջ 39 («գերիս դէմն խոստովանել եւ կամ գերիս գոյացութիւնս եւ գիրաբանչիւր հանդերձ յատկութեամբ»), անս՝ Հ. Քրոսեյան, Հովհանն Օձնեցու «Ընդդէմ երեսութեանաց» ճառի հայրախոսական աղբյուրները - Ս. Հովհանն Օձնեցի հայրապետը և իր ժամանակը, Ս. Էջմիածին, 2004, էջ 94:

³² Прот. Г. Флоровский, Восточные основы неоквн, с. 80. Եզրաբանական այս շփոթն առկա է նաև Ս. Գրիգոր Նազիանզացու մատենագրության հայերեն թարգմանության մեջ. այսպէս. «Առ որս» ճառաշարի Բ ճառում հուն. *υποστασις* (անձ)-ը թարգմանված է «գոյութիւն». տե՛ս Ընդդէմ երեսութեանաց, էջ 39, ծմբ. 2:

էր Արիոսը), այլ շնորհիվ իր հայրությանը պայմանավորված օրինաչափ անհրաժեշտության: Այս ըմբռնումն է ընկած ինչպես Ս. Աթանասի, այնպես էլ կապապոդոկյան հայրերի հակաարիոսյան երրորդաբանության հիմքում³³:

Հաստատագրելով Քրիստոսի լիակատար մարմնավորման, մարդացման և այդու նրա բնական աճի իրականությունը՝ Նարեկացին գրում է. «Անճուռ գոյով ընտանի փառացն, հաճեցաւ մտանել յարգանդ մայրենի Աստուածածին կուսին մաքրութեան, յորում աճեցոյց գրոյսն արհմութեան ի լուսասահման անդաստանին անարատութեան...» (ՀԵ): Միտքն աստվածաբանորեն աղերսված է երևութականների (դոկետների) դեմ գրված Ս. Եփրեմ Ասորու ներքոբերյալ տողերին. «Եթե Բանը դարձավ լոկ պատկեր՝ էլ ի՞նչ հարկ կար բնության: Եթե ծնունդը կատարվեց առերևույթ՝ էլ ի՞նչ հարկ կար կնոջ: Եթե անցավ իբրև խողովակի միջով՝ էլ ի՞նչ հարկ կար ժամանակի և հողության...: Նրա մարմնավորման վերաբերյալ ունեն նաև այլ ապացույց. աճում մինչ կատարյալ հասակ»³⁴: Այս գաղափարն է ընկած նաև Ս. Հովհան Օձնեցու «Ընդդէմ երևութականաց» ճառի հետևյալ հատվածի հիմքում. «Եւ եթէ ոչ գոյութիւն ինչ անձնաւոր զմերս ի Կուսէ ընդ ինքեան միաւորեաց Բանն, զիա՞րդ Ինքն զինքն Մարդ և Որդի մարդոյ անուանեաց: Զիա՞րդ եւ տղայ երեւեալ խանձարրապատեցաւ եւ կաթնաբոյծ եղանիւր և առ կատարելութիւն ի վեր ընթանայր անմամբ հասակի...»³⁵:

Եթե խնդրո առարկա բացարձակաբանությամբ «դրսևորվում է» Ս. Երրորդության վերտնօրինական, անդրանցական ինքնիսկությունը, ապա քրիստոսաբանական մտածումներով Ս. Երրորդության նախախնամական, տնօրինական բովանդակությունը: Նարեկը հարուստ է այս բնույթի մտածումներով նմանապես: Մասնավորաբար շահեկան են քրիստոսաբանական մտածումները, որոնցում բնութագրվում է Քրիստոս Փրկչի տնօրինական սխրանքը: Այսպես, Ս. Երրորդության անձերից մեկի՝ Աստծո Որդու մարմնացման և մարդացման խորհուրդը լավագույնս ներկայացնելու նպատակով Նարեկացին գրում է. «Մինն յերջանկափառ, համազար ահաւորութենէ երիցն անձնաւորութեանց, խոնարհեալ ի վերուստ՝ աստուստ ի ստորինս, որ էրն իսկ ի բնէ անբաժ ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն Աթոռոյ եւ անկարաստ՝ դիմացն ծնողին սիրոյ, մտեալ ի սենեակ Կուսին արգանդի պարզաբար եւ ելեալ անտի յաւդաւորաբար մարմին էապես անորոշելի, անթերի մարդկութեամբն եւ անպակաս Աստուածութեամբն...: Եւ աւարտեալ զոնարինականացն զփրկանաւորն զտնտեսութիւն՝ աստուածապէս վերակենցաղեաց... նստաւ ճոխութեամբ յԱթոռն իւրական սկզբնածառանց Հաւրն հաւասարութեան, յորմէ եւ բնաւ իսկ ոչ մեկուսացաւ՝ անկորուստ առեցելովն եւ աննուազ սեպհականաւքն» (ԼԴ), «խոնարհեալ իջեալ ի յերկնից, աննուազ գոյով ընտանի փառացն», կամ «Աստուածութեան անընդմիջելի ի մերասէրն մարմնոյ» (ՀԵ):

Բերված հատվածները, հատկապես դրանց ընդգծյալ մասերը, վերաբարձում են Ս. Հովհան Ոսկեբերանի այն մտածումի, թե Աստծո Բանը մարմնանալով՝ եղավ Այն, ինչ չէր՝

³³ St'v Флоровский, Գշվ. աշխ., էջ 76-82:

³⁴ St'v Филарет арх. Гумилевский, Историческое учение обь отцах перкви, М., 1996, с. 91.

³⁵ Ընդդէմ երևութականաց, էջ 20:

ուածախառն մարմնոյն»⁴⁵, «Յաճախապատումի»՝ «Տէրն յետ մկրտութեան պահովք պընդեալ աստուածախառն մարմնովն»⁴⁶: Ս. Եպիփան կիպրացոյ՝ Հարութեանը նվիրված ճառի «Բայց միմն էր անասնոց զեմումն, իսկ միմն՝ աստուածախառն մարմնով պատարագ»⁴⁷ արտահայտություններում:

Քրիստոսի տնօրինական գործի փառապատկեր կազմող Խաչով և Արա վրա թափած արյամբ մի կողմից ակնարկելով դրա նախօրինակը հանդիսացող Քրոնք լեռան վրա Մովսեսի գավազանով ժայռից (վեմից) բխած աղբյուրը (Ելք ԺԷ 5-7), մյուս կողմից, մատնահիշ անելով դրա եկեղեցական վերարժեպորտմը դարձած Ս. Հաղորդության խորհուրդը⁴⁸, Նարեկացին գրում է. «Նոյն իսկ էութիւն Աստուծոյ մարմին եղելոյ անուամբ այս վիմին նշանակեցաւ՝ պատառամբ կողին զքնաս արբուցեալ (ՀԵ): «Վեմ=Քրիստոս» խորհրդաբանությունը, որ ունի իր սուրբգրային ակունքը («...եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն... զի ըմպէին ի հոգեւոր վիմէն, որ երթայր զհետ անցա, եւ վեմն էր ինքն Քրիստոս» (Ա. Կորնթ. Ժ 3-5), հայրախոսական ավանդության մեջ իր թերևս վաղագույն անդրադարձը գտել է Ս. Իրինեոսի (+202) «Ցոյցք առաքելական քարոզութեանն» երկում («Վեմը ինքն իսկ Քրիստոս էր»)՝⁴⁹ և աստվածաբանական մեկնաբանության ենթարկվել Ս. Գրիգոր Նազիանզացոյ ժառանգության մեջ:

«Աստվածաբանության մասին» ճառաշարի Բ ճառում նա գրում է. «Ես քայլում էի Աստուծուն հասնելու նպատակով. այս մտածումով՝ հրաժարվելով նյութից և նյութականությունից, ըստ կարի կենտրոնանալով ինքս իմ մեջ, բարձրացա լեռը: Բայց երբ հայացքս բարձրացրի, հագիվ նկատեցի Աստծո թիկունքը (հմմտ Ելք ԼԳ 22-23)՝ այն էլ ծածկված Վեմով, այսինքն՝ հանուն մեզ մարմնացած Խոսքով»⁵⁰:

Նույնքան ուշագրավ են Նարեկացոյ եկեղեցաբանական դիտումները, որոնք շարունակում են այդ մարզում առկա անցյալի վարդապետական ձեռքբերումների: Այսպես. ցույց տալու համար Եկեղեցոյ նախագոյությունն ու Աույնիս հրեշտակներից առաջ լինելը՝ Նարեկացին գրում է. «...Սկզբնաւոր յառաջակառոյց, քան զքնակիչս հոգեղինացն ի մմա զարութեանցն» (ՀԵ): Միտքը ներկա է նաև ճգնակյաց հոր Եկեղեցոյ զանձում. «Որ յսկզբնաձեռն յառաջակառոյց զայս կերպարն հրաշագարդ իրի հաճեցար լինել...»⁵¹:

Եկեղեցոյ խորհրդի և նշանակության գոյաբանական այսօրինակ արժեպորտմը զալիս է Առաքելական հայրերի ժամանակներից (Հերմասի «Հովիվ»)՝⁵² և վարդապետորեն հաստատագրվում հետնիկիական հայրերի (Ակակիոս, Գեմնադիոս) ժառանգության մեջ: Նարեկացոյ նպատակն է խորհրդաբանորեն վավերացնել Եկեղեցոյ վերժամանակային կարևորությունը, այն ներկայացնել իբրև վերին արժեքների գետնադրան: Քանի որ Եկեղե-

⁴⁵ Ամդ, էջ 187:

⁴⁶ Յաճախապատում, էջ 82:

⁴⁷ Տե՛ս ՄՄ ձեռ. 993, թ. 203բ:

⁴⁸ Մատենա Ողբերգութեան, էջ 1093, ծմթ. 26:

⁴⁹ Das heiligen Irenhäus Schrift zum Erwise der apostolischen Werküdigung, աշխատ. Կարապետ ծ. վրդ. Տեր-Սիրոյանի, Երվանդ վրդ. Տեր-Սիմոնյանի, Leipzig, 1907, 46:

⁵⁰ И. Мейендорф. Введение в светотеческое Богословие, с. 172:

⁵¹ ՆԲՀ, Բ, էջ 720:

⁵² Եզնիկ վրդ. Պետրոսյան, Հայրաբանություն, էջ 55:

բանում. «Ո՞չ ահա Մելքիսեդեկ յարիմակ ճշմարտիդ ահաորութեան ի Ձիթաստանեաց լեռինն, ուր լետոյ ոտք մարմնացելոյ Աստուծոյ զետեղեալ կացին ի վերնոց անտի հրեշտակաց ի պտղոց տեղոյն իղեցա»։ Այս պատմությունը, որ տարածված էր հույն իրակա-նության մեջ, թարգմանվել ու զետեղվել է Հայսմավորքում (մարտ 25), որ պատմվում է, թե Մելքիսեդեկը ճգնությանը բնակվում էր Ձիթենյաց լեռան վրա (ըստ հուն.՝ Թաբոր)։ Նրան այցելում է Աբրահամը և օծվում Մելքիսեդեկի կողմից ու լսում երկնքից եկող մի ձայն, թե՛ Մելքիսեդեկը լինելու է հավիտենական քահանա։ Ու չնայած սուրբգրային պատմության մեջ չի նշված, թե հրեշտակների կողմից է Մելքիսեդեկը օծվել քահանա, բայց Նարեկացու այդ մասին հաստատումը թույլ է տալիս ենթադրել, որ նա օգտվել է այդ պատմության այժմ անհայտ մի տարբերակից, որ, ինչպես երևում է, աչքի առջև է ունեցել Ս. Հովհանն Ոսկեբերանը։ Իր Արարածոց մեկնության մեջ նա գրում է. «Նա թերևս ինքն իրեն ձեռնադրած քահանա էր, որովհետև այնպես էին այն ժամանակվա քահանաները, կամ էլ որովհետև ծեր էր, ուստի այդ պատիվը նրան մատուցեցին իր մերձավորները (հրեշտակները - Հ. Բ.)»⁵⁹։

Նարեկում այս ավանդությունը շարունակվում է հետևյալ բառերով. «ուստի շիրմի սկզբնահարմ պաշտպան եպիսկոպոսական արքայապատիո ճոխութեամբ ի քեն հանդերձեալ աստա»։ Այստեղ ակնարկվում է հին հրեից մեջ տարածված այն ավանդազրույցը, համաձայն որի Նոյը, Ադամի ոսկորներն իր հետ տապան վերցնելով, հետագայում ամփոփում է Գողգոթա լեռան վրա, որի «զագաթ» անվանումը զալիս է այստեղից։ Ադամի գեղզմանի վրա պահապան է կարգվում Մելքիսեդեկը որպես քահանա և թագավոր։ Սակայն նա չկարողացավ քավել Ադամի մեղքը, մինչև որ հայտնվեց Քրիստոս Ինքը և որպես ճշմարիտ Քահանա ու թագավոր, լինելով երկրորդ Ադամ, քավեց առաջին Ադամի մեղքը։ Այս ավանդությունը, որի մասին տեղյակ է նաև Անանիա Սանահնեցին⁶⁰, ինչպես երևում է, Նարեկացին վերցրել է Ս. Եպիփան կիպրացու Արարածոց մեկնությունից, ուր այն պատմվում է ամենայն մանրամասնությամբ։ Ըստ որում քահանայական և թագավորական պաշտոնները Մելքիսեդեկը նորածին Հիսուս մանկանն է հանձնում Բեթլեհեմի մտորում⁶¹։

⁵⁹ Migne, PG. t. 53. col. 328. Ավետիքյան, նշվ. աշխ. էջ 656:

⁶⁰ Տե՛ս «Գանձասար», 1994, Ե, էջ 250:

⁶¹ Տե՛ս Հ. Քյոսեյան, Դրվագներ..., էջ 286-287: